ՏԱՃԿԱՀԱՅՐ

Զէյթունի կաթողիկոսական փոխանորդը պատուիրել է տեղական քահանաներին, որ այսուհետև փակեղով և վերարկուով շրջեն։ Մինչև ցայժմ քահանաները սովորական շալվարով և աշխարհական շորերով են շրջելիս եղել։

Բիւզանդիոնի մէջ կարգում ենք.

Եթովպիոյ Մենելիք կայսրը Պօլսոյ Պատրիարք Ն. Ս. Մաղաքիա սրբազանին շնորհել է Եթովպական աստղ պատուանշանի առաջին կարգը, իսկ Մկրտիչ քահանայ Զըլզատեանին և Բարթող փաշային նոյն շքանշանի երկրորդ կարգը, բացի դրանից քահանային նուիրել է նաև մի սիրուն խաչ։

Ռումանիոյ Բրէյլա քաղաքից պատրիարքարանին գրել են հետևեալը.—

Յուլիսի 29-ին ուրբաթ առաւօտ տեղացի ազգայիններէն երկու եղբայրներ ժամասացութիւնից յետոյ գնացել՝ եկեղեցին փակել են առանց քահանայի ու թաղական խորհրդի դիտութեան բանալիները գրել են գրպան և հեռացել, յայտնելով քահանային, որ այսուհետև եկեղեցու մէջ պաշտօն չունի. ժողովուրդն ու թաղական խորհուրդը թէև միջամտել են, բայց բոլորովին ի զուր։ Այդ եկեղեցուն բարեյիշատակ մի անձն նուիրել էր 20 հազար ֆրանկ, որը դրուած էր կառավարութեան խնայողական գանձարանը և տարեկան 1200 ֆրանկ յատկացուած էր քահանային որպէս ռոճիկ։ Այս գրամը նախորդ թաղականը, որ յիշեալ ազգայիններին եղբայրն է խարդախութեամբ ձեռք կրբերէ և աւելի շահ առնելու դիտումով կը յանձնէ մի եւրոպացու, նրա տունը գրաւական վերցնելով իւր անունով։ Եւրոպացին մի երկու տարի փողի տոկոսը վճարելուց յետոյ, գործով հեռանում է քաղաքից և տունը մնում է այդ թաղականին. վերջինս էլ անցեալ տարի մեռնում է առանց օրինաւոր հաշիւ տալու և աւանդ դրուած գրամի խնդիրը կը մնայ շփոթ վիճակի մէջ։ Քահանային ամբաստանելով և եկեղեցին փակելով՝ կերևի այդ գրամը, որից 4000 ֆրանկն արդէն պա-

կասած է, հալեցնելու ջանք կայ։ Բուքրէշում 9 տուն հայ կայ, որոնցից հինգն իրար հետ ազգական կամ իրար հետ շահ ունեցող մարդիկ են. հետևաբար ոչ դիտողութիւն անող կայ և ոչ բողոքող։

Պոլսում դատարանը մերժել է հանդուցեալ Աշըդեան պատրիարքի ազգականների խնդիրը, որով նրանք դիմել էին քանդել տալու հանդուցեալի Երուսաղէմի վանքի օգտին արած կտակը։

Երուսաղէմի պատրիարքի Պոլսոյ փոխանորդութեան պաշտօնն ստանձնելու համար նշանակուել է Պոլիս պիտի գայ Եղիշէ Ծ. վարդապետ Զիլինկեարեանը։

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ

ԵՒ

Ց. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Արեւելքի մէջ կարդում ենք.

Ս. Թարգմանչաց տօնին առթիւ, այս առաւօտ Ս. Պատրիարքը Ղալաթիոյ եկեղեցիներ մէջ նախագահեց եկեղեցական արարողութեանց, և պատարագի միջոցին քարոզ մը խօսեցաւ, ընտրեալ առնելով օրուան տօնին առթիւ Եսայեայ սա խօսքը. «Եւ ծանիցին ի մէջ նոցա, ու ամենեքեան առիցեն՝ եթէ սոքա են զաւակք օրհնեալք Աստուծոյ»։ Ս. Պատրիարքը նախ գրին կարևորութիւնը բացատրեց, յետոյ խօսքը մասնաւորելով օրուան տօնին վրայ, Թարգմանչաց գործունէութիւնը ի վեր հանեց թէ՛ եկեղեցականութեան և թէ գրականութեան մէջ։ Ըստ թէ անոնց աշխատութիւնները արժանի են նկատուելու իբր օրհնեալ զաւակները Աստուծոյ։ Խօսելով Ս. Լուսաւորչի գործունէութեան վրայ, նկատեց զայն իբր մեր կրօնքին լուսաւորիչը, իսկ Ս. Թարգմանիչները՝ մեր մտքին լուսաւորիչները։ Այսպէս ներկայացուց Ս. Սահակ ու Մեսրոպ Հայրերը իբրև